

Պ-329-28.10.2019-ԱԱ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՂԵՂԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ
ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Ղեղերի մասին» 2016 թվականի մայիսի 17-ին ընդունված (ՀՕ-86-Ն) օրենքի 16-րդ հոդվածի 23-րդ մասը լրացնել նոր՝ 7-րդ կետով.

«7) բուժման կուրսի կամ անձնական օգտագործման նպատակով ֆիզիկական անձանց անունով ներմուծված դեղերի համար:»:

Հոդված 2. Օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետը լրացնել նոր՝ գ. ենթակետով.

«գ. ֆիզիկական անձինք՝ սույն օրենքի 21-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետին համապատասխան:»:

Հոդված 3. Օրենքի 21-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«1) օտարերկրյա պետություն մեկնող եւ օտարերկրյա պետությունից ժամանող ֆիզիկական անձի բուժման կուրսի կամ անձնական օգտագործման դեղերի, ինչպես նաեւ փոխադրողի կողմից կամ միջազգային փոստային փոխադրումներով ֆիզիկական անձի անունով ներմուծվող անձնական օգտագործման դեղերի համար՝ կառավարության կողմից սահմանված կարգի համաձայն:»:

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՏԵՂԵԿԱՆՔ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈՂՎԱԾԻ ԿԵՐԱԲԵՐՅԱԼ

«ԴԵՂԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾ

Հոդված 1. «Դեղերի մասին» 2016 թվականի մայիսի 17-ին ընդունված (ՀՕ-86-Ն) օրենքի 16-րդ հոդվածի 23-րդ մասը լրացնել նոր՝ 7-րդ կետով.

«7) բուժման կուրսի կամ անձնական օգտագործման նպատակով ֆիզիկական անձանց անունով ներմուծված դեղերի համար:»:

Հոդված 2. Օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետը լրացնել նոր՝ գ. ենթակետով.

«գ. ֆիզիկական անձինք՝ սույն օրենքի 21-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետին համապատասխան:»:

Հոդված 3. Օրենքի 21-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«1) օտարերկրյա պետություն մեկնող եւ օտարերկրյա պետությունից ժամանող ֆիզիկական անձի բուժման կուրսի կամ անձնական օգտագործման դեղերի, ինչպես նաեւ փոխադրողի կողմից կամ միջազգային փոստային փոխադրումներով ~~մեկ անսվա ընթացքում մեկ անգամից ոչ ավելի հաճախականությամբ~~ ֆիզիկական անձի անունով ներմուծվող անձնական օգտագործման դեղերի համար՝ կառավարության կողմից սահմանված կարգի համաձայն:»:

~~**Հոդված 4.** Օրենքի 21-րդ հոդվածի 7-րդ մասը լրացնել նոր՝ 1.1 կետով.~~

~~«1.1) Սույն մասով նախատեսված դեղերի ներմուծման կարգն ու քանակները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:»:~~

Հոդված 4.5. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ՂԵՂԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾ
(Պ-329-28.10.2019-ԱՍ-011/1)

Առաջարկության հեղինակը	Նախագծի այն մասը, որին վերաբերում է առաջարկը	Առաջարկը	Առաջարկն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հիմնական զեկուցողի եզրակացությունը	Առաջարկն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1	2	3	4	5
<p>ՀՀ ԱԺ պատգամավոր Սիսակ Գաբրիելյան</p> <p> </p>	Նախագծի 3-րդ հոդված	<p>Նախագծի 3-րդ հոդվածով փոփոխվող Օրենքի 21-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետից հանել «մեկ ամսվա ընթացքում մեկ անգամից ոչ ավելի հաճախականությամբ» բառերը, իսկ «ղեղերի համար» բառերից հետո ավելացնել «կառավարության կողմից սահմանված կարգի համաձայն:» բառերը:</p>	Ընդունվել է:	Ընդունվել է:
<p>ՀՀ ԱԺ պատգամավոր Սիսակ Գաբրիելյան</p>	Նախագծի 4-րդ հոդված	Նախագծի 4-րդ հոդվածը հանել:	Ընդունվել է:	Ընդունվել է:
<p>ՀՀ ԱԺ պատգամավոր Սիսակ Գաբրիելյան</p>	Նախագծի 5-րդ հոդված	Նախագծի 5-րդ հոդվածում համարակալումը համարակալմամբ:	«5.» փոխարինել «4.»	Ընդունվել է: